ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

Doi: 10.56737/2953-7843-2025.01-9

Տ. ՄՈՎՍԵՍ ՔԱՀԱՆԱ (ԴԱՎԻԹ) ՍԱՀԱԿՅԱՆ
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՔՐԻՍՏՈՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ Ե. ԴԱՐՈՒՄ. *ՄԱՐԴԱՅԱՑ ԱՍՏՎԱԾ*

ՄՈՒՏՔ

Հիսուս Քրիստոսին նվիրված ուսմունքը, որ ձեւավորվել է առաջին դարերում եւ հետագայում վերածվել գիտական համակարգի՝ քրիստոսաբանության, կարեւոր եւ կենտրոնական տեղ է զբաղեցնում քրիստոնեական վարդապետության զարգացման գործընթացում։ Ապահովելով Հիսուս Քրիստոսի ինքնության եւ առաքելության ավելի խոր ըմբռնում (Կողոս. Ա. 15–20, Փիլ. Բ. 5–11)՝ այն ընկած է նրա փրկչական գործունեության (Հռոմ. Ե. 8, Եփ. Բ. 8–9) եւ նրանով պայմանավորված հավատքի (Ա. Հովհ. Դ. 1–2, Ա. Կորնթ. ԺԵ. 1–2) ու պաշտամունքի (Կող. Գ. 16–17) հիմքում՝ սահմանելով քրիստոնյայի ինքնությունը (Ա Կորնթ. Ա. 22–23)։

Տարբեր մոտեցումների կիրառմամբ ներկայացնելով աստվածամարդկային միությունը՝ քրիստոսաբանությունը ոչ միայն ներկայացնում է քրիստոնեական հավատքի հիմնարար սկզբունքներ, այլ նաեւ՝ փոխանցում է Աստծու հայտնության ըմբռնումը Հիսուս Քրիստոսի միջոցով, որով եւ դառնում է ընդհանուր աստվածաբանության՝ Աստծու մասին ճանաչողության եւ Աստծու հետ մարդու երկխոսության կարեւորագույն առանցքներից մեկը։

Սույնն ի մտի ունենալով՝ կարող ենք վստահորեն ասել, որ ինչպես ընդհանուր աստվածաբանության, այնպես եւ քրիստոսաբանության

---

[1]* *Ստացվել է՝ 4.08.2024, գրախոսվել է՝ 4.09.2024։*
Էլ. հասցե՝ fr.movses@gmail.com:

հիմնադիրը նույն ինքը Հիսուս Քրիստոսն է։ Նրա վարդապետությունը գրի են առել Իր աշակերտները եւ փոխանցել մարդկությանը (Հովհ. Ի. 30–31, Մատթ. ԻԸ. 19–20)։ Նախ եւ առաջ հենց այդ Սուրբ Գրություններ ի միջոցով է, որ մարդը կարողանում է ծանոթանալ էմմանուելի՝ Հիսուս Նազովրեցու հետ, որ ներկայանում է իբրեւ Քրիստոս (Մատթ. ԺԶ. 16, Հովհ. Ա. 41), իբրեւ Խոսք (Հովհ. Ա. 1) եւ մարմին (Հովհ. Ա. 14), իբրեւ Տեր (Հռոմ. Ժ. 9, Գործք Ժ. 36) եւ Ծառա (Փիլ. Բ. 5–8, Մարկ. Ժ. 45), իբրեւ Աստծու Որդի (Մատթ. Գ. 17, Հովհ. Ի. 31) եւ Մարդու Որդի (Մարկ. Ժ. 45, Ղուկ. Ե. 24), եւ վերջապես իբրեւ Աստված (Հովհ. Ի. 28), որ մարդացել է եւ ինքն իրեն զոհաբերել հանուն մարդկության փրկության (Փիլ. Բ. 6–8, Հռոմ. Ե. 8, Ա. Հովհ. Ա. 1)։

Հիսուս Քրիստոսի՝ Մարմնացած Խոսքի, ինքնության ըմբռնումը հիմնարար էր ինչպես իր անմիջական աշակերտների, այնպես եւ հետագայում իրեն հավատացողների համար, որոնք ձգտում էին հասկանալ նրա կյանքի, մահվան եւ հարության խորհուրդն ու նպատակը։ Այս ձգտումով պայմանավորված՝ վաղ քրիստոնյա աստվածաբանները հաճախ բախվել են այնպիսի բնական, բայց եւ խորը հարցադրումների, ինչպիսիք են. ի՞նչ է նշանակում Խոսքի մարմնավորումը, ինչպե՞ս է դա տեղի ունեցել, եւ որքանո՞վ էր հնարավոր ու անհրաժեշտ, որ կատարյալ Աստված դառնար նաեւ կատարյալ մարդ։

Բնականաբար, Հայոց Եկեղեցին նույնպես խնդիր ուներ իր հետեւորդներին փոխանցելու Քրիստոսի մասին ուսմունքը, բացատրելու նրանց Քրիստոսի ինքնությունը՝ իրենց իսկ հարազատ լեզվով։ Սրանով պայմանավորված, Հայոց Եկեղեցու վարդապետները գրերի գյուտից հետո անմիջապես լծվել են ոչ միայն Սուրբ Գրքի եւ ծիսական ու աստվածաբանական երկերի թարգմանությանը, այլեւ իրենք եւս հեղինակել են տարբեր բնույթի երկեր, որոնցում ներկայացրել են Հիսուս Քրիստոսին իբրեւ մարդացած Աստծու։ Այդ երկերի քննությամբ ստորեւ ներկայացվելու է Հայոց Եկեղեցու քրիստոսաբանությունը Ե. դարում՝ երբ Հայոց Եկեղեցին դեռ չէր մտել քաղկեդոնական-քրիստոսաբանական վեճերի մեջ, այլ առավելաբար հետապնդում էր Քրիստոսին իր հետեւորդներին բացատրելու նպատակը։

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՔՐԻՍՏՈՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ Ե. ԴԱՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Աստծու Որդին, Հիսուս Քրիստոսն Աստված է[2]*, Արարիչ*[3]*, որ «հագել» է մարդկային չարչարելի բնություն՝ մարմին ու հոգի, եւ «խառնելով»՝ միավորել այն իր աստվածությանը, արդարություն գործել հոգով եւ մարմնով եւ ազատել մարդկանց մեղքի ծառայությունից, քանզի մարմնացել ու մարդացել է իր կամքով եւ հանձն առել բոլոր մարդկային կարիքերն ու կրքերը, բացի մեղքից։ Այս են ուսուցանում մեզ «Հաճախապատում» ճառերը*[4]*։*

Մարդանալով «Քրիստոս, որ վասն մեր աղքատացաւ ստուգապէս, որ Տէրն է փառաց... հաշտեցոյց զԱստուած ընդ մարդկան ի ձեռն խաչի եւ կամաւոր չարչարանաց»[5]*։ Այլ խոսքերով՝ խոնարհվելով եւ մտնելով մարդկային իրականություն՝ Քրիստոս, որ Որդին է Աստուծո, դառնում է մարդ եւ չարչարվելով ու խաչվելով՝ մահանում է մարդկանց փոխարեն իբրեւ զոհաբերություն մարդկային մեղքերի քավության համար՝ մաքրելով մարդկանց մեղքերն ու հաշտեցնելով մարդկանց՝ արարածներին, իրենց Արարչի հետ, նորոգելով վերջիններիս մեղքի ապականությունից եւ շնորհով նրանց իր եղբայրը եւ Աստծու զավակները դարձնելով.* «եւ Քրիստոս զխոնարհութեան մարմինս զայս առնլով՝ խոնարհութեամբ զնա [զաստուածամարտն] կործանեաց, եւ զխոնարհս բարձրացոյց, եւ խայտառակեաց զնոսա ամբարհաւաճութիւնն»[6]*։*

Աստծու Որդու մարդեղացման իրականությունը «Հաճախապատում» ճառերում բացատրվում է «հագնել» («զգենուլ») եւ «խառնել» եզրույթների կիրառմամբ, որոնց կողքին հանդիպում են նաեւ «վերցնել» («առնուլ») եւ «միավորել» եզրույթները[7]*։*

---

[2] *Տէս Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի ասացեալ Ճառս Յաճախապատումս եւ լուսաւոր վարդապետութիւնս յաղագս աւգտի լսողաց, Մատենագիրք Հայոց, Ե. դար, հտ. Ա., Անթիլիաս–Լիբանան, 2003 (այսուհետեւ՝ Յաճախապատում), էջ 67, 137։*

[3] *Տէս նույն տեղում, էջ 93, 95։*

[4] *Տէս նույն տեղում, էջ 16, 93–94, 118։*

[5] *Նույն տեղում, էջ 59, 56։*

[6] *Նույն տեղում, էջ 94, հմմտ. նույն տեղում, էջ 15, 16, 35, 61, 66, հմմտ. նաեւ Պատմութիւն վարուց եւ մահուան առն երանելւոյ սրբոյն Մեսրոպայ Վարդապետի մերոյ Թարգմանչի ի Կորիւն Վարդապետէ յաշակերտէ նորին, Մատենագիրք Հայոց, Ե. դար, հտ. Ա., Անթիլիաս–Լիբանան, 2003, էջ 268–269։*

[7] *Տէս Յաճախապատում, էջ 16, 72, 93–94։*

Կարեւոր է ընդգծել, որ «խառնումն» (κεράννυμι, μίγνυμι) եզրույթը խորհրդանշում է աստվածային եւ մարդկային բնությունների միասնությունը սերտաճման (συμφυία, συμφεύια) համապատկերում, մատնանշելով բնությունների սերտ, անտրոհելի կապը, Աստծու՝ մարդկային իրականության մեջ մտերմիկ մասնակցությունը եւ մարդկային ներգրավվածությունն աստվածային կյանքում[8]։ «Զգենումն» (لحم) եզրույթը, որ ուղղակի նշանակում է «հագնել», ասորական աստվածաբանության մեջ օգտագործվել է Նիկիական σαρκωθέντα (մարմնացավ) եզրույթը թարգմանելու նպատակով, որով «զգեստավորման» պատկերը ասորական միջավայրում դարձել է մարմնավորման վերաբերյալ Նիկիական ուղղափառ ընկալման համարժեքը, խորհրդանշելով աստվածայինի եւ մարդկայինի կատարյալ միությունը[9]։

«Զգենումն» եւ «խառնումն» եզրույթները «Հաճախապատում» ճառերում կիրառվում են թե՛ առանձին-առանձին, թե՛ միասին, սակայն երկու պարագաներում էլ չեն տրոհվում տարբեր իրականությունների մեջ, այլ բնորոշում են մի եւ նույն իրողությունը՝ աստվածայինի եւ մարդկայինի կատարյալ միությունը. Որդի Աստված հագնում է ամբողջական մարդկային բնություն (մարմին եւ հոգի) ու խառնում է այն իր աստվածությանը[10], դարձնելով իր մարմինը (մարդկային բնությունը)՝ «աստվածախառն»[11], այսինքն՝ կատարելապես միավորված մեկը մյուսի հետ։

«Հաճախապատում» ճառերում յուրահատուկ կերպով ընդգծված են նաեւ Աստծու Որդու կամավոր չարչարանքների եւ մահվան դրվագները[12]։ Լինելով անմեղ՝ Քրիստոս ինքնակամ գնում է մահվան, ինչով եւ իրականացնում է «հաշտութիւն»-ն Աստծու եւ մարդկության միջեւ[13]։ Սրանից է բխում մարդու փրկությունը, որը կապվում է նաեւ Երկնքի արքայության

---

[8] *Տե՛ս* Sh. A. Ananyan, The Armenian Chritological Tradition, The dialogue between the Eastern Orthodox and Oriental Orthodox Churches, ed. by Ch. Chaillot, Volos, *2016*, *էջ 302։*

[9] *Տե՛ս նույն տեղում, էջ 303–304։*

[10] *Տե՛ս Յաճախապատում, էջ 118։*

[11] *Տե՛ս նույն տեղում, էջ 55։*

[12] *Տե՛ս նույն տեղում, էջ 16, 56, 76–77, 89, 92, 93, 114, հմմտ. Կանոն Սրբոյն Գրիգորի Պարթեւի, դարձեալ հարցումն եւ պատասխանիք նորա, Մատենագիրք Հայոց, Ե. դար, հտ. Ա., Անթիլիաս–Լիբանան, 2003, էջ 149, Ժամակարգութիւն Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ յորում պարունակին Սաղմոս Դավթի, Ժամագիրք Ատենի եւ Տօնացոյց, Զ. տպ., Վաղարշապատ, 1999, էջ 294։*

[13] *Տե՛ս Յաճախապատում, էջ 56, 61, 83, 89, 119։*

ժառանգման եւ մարդկանց աստվածացման[14]՝ *Աստծու հետ միավորման հետ, որտեղ Աստծու մարդեղացումն ու մարդու աստվածացումը բնութագրվում են նաեւ «կերպարանք» վերցնելով, առաջինը՝ ծառայի, երկրորդը՝ Աստծու*[15]*։*

Ճառերի հեղինակը այս համապատկերում շատ հստակ ընդգծում է նաեւ Սբ. Մկրտության եւ Սբ. Հաղորդության խորհուրդների անհրաժեշտությունը, որոնցով եւ մարդ կարողանում է «որդեգրվել» Աստծուն եւ դառնալ Քրիստոսի ժառանգակիցն ու եղբայրը[16]*, որը նույնպես տեղի է ունենում «զգենման» միջոցով, սակայն արդեն մարդկանց.* «զՔրիստոս զգեցան եւ զկերպարանս որդեգրութեան առին»[17]*։*

Քրիստոսի մարդեղացման վերաբերյալ ընկալումների շրջանակներում յուրահատուկ տեղ են զբաղեցնում Սբ. Սահակ Պարթեւի եւ Սբ. Մեսրոպ Մաշտոցի գրությունները։ Անդրադառնալով նեստորական ուսմունքին, որ Քրիստոսին բաժանում էր երկուսի՝ առանձին մարդու

---

[14] *«Աստվածացման» ընկալումը, որը ենթադրում է մարդու միությունը Աստծու հետ՝ հիմնարար կերպով ձեւավորվում է Սբ. Իրինեոս Լիոնացու (130–202 թթ.) ժամանակներից, որն «Ընդդեմ հերձվածոց»* (Κατά Αἱρέσεων) *իր նշանավոր երկում ուսուցանում է, որ Աստծու Որդին դարձավ Մարդու Որդի, եւ Աստծու Խոսքը՝ մարդ, մեղավոր մարմնի նմանությամբ, որպեսզի դատապարտի մեղքը եւ դուրս մղի այն մարմնից՝ մարդուն կոչելով դեպի իր նմանությունը, մարդուն՝ Աստծուն ընդօրինակող դարձնելով՝ սովորեցնի ընդունել Աստծուն եւ Աստծուն ուրացածին ընտելացնի Աստծու հետ, որպեսզի Աստված բնակվի մարդու մեջ, եւ մարդը, միանալով Աստծուն, դառնա Աստծու որդի՝ որդեգրվելով նրան եւ ստանալով անապականություն ու անմահություն (տե՛ս* Patrologiae: Cursus Completus, SEU Bibliotheca Universalis, Integra, Uniformis, Commoda, Oeconomica, Omnium SS. Patrum, Doctoreum Scriptorumque Ecclesiasticuorum…; Series Græca In Qua Prodeunt Patres, Doctores Scriptoresque Ecclesie Græce As. Barnaba Ad Photium, Accurante J. P. Migne, Tomus VII, Pars Prior. S. Irenaeus, Episcopus Lugdunensis et Martyr, 1857, *էջ 874–875, 937–940, 944)։ Միեւնույն ժամանակ Սբ. Իրինեոս Լիոնացին ինքը չի օգտագործում «աստվածացում» եզրույթը։ Եկեղեցական շրջանակներում այն սկսում է գործածվել Սբ. Աթանաս Ալեքսանդրացու (296–373 թթ.) շնորհիվ, որը «Խոսքի մարդեղացման մասին»* (Περὶ ἐνανθρωπήσεως τοῦ Λόγου) *իր երկում գրում է.* «Αὐτὸς γὰρ ἐνηνθρώπησεν, ἵνα ἡμεῖς θεοποιηθῶμεν» *[Նա մարդացավ, որպեսզի մենք աստվածանանք]* (Patrologiae: Cursus Completus, SEU Bibliotheca Universalis, Integra, Uniformis, Commoda, Oeconomica, Omnium SS. Patrum, Doctoreum Scriptorumque Ecclesiasticuorum…; Series Græca In Qua Prodeunt Patres, Doctores Scriptoresque Ecclesie Græce As. Barnaba Ad Photium, Accurante J. P. Migne, Tomus XXV. S. Athanasius Alexandrinus Archiepiscopus, Tomus Primus, *1857, էջ 192)։ «Աստվածացում» եզրույթը իբրեւ այդպիսին «Հաճախապատում» ճառերում չի հանդիպում, սակայն գաղափարն առկա է տարբեր դրվագներում (տե՛ս Յաճախապատում, էջ 13, 15, 16, 19, 107)։*

[15] *Տե՛ս նույն տեղում, էջ 15, 16, 72, 88։*

[16] *Տե՛ս նույն տեղում, էջ 15, 28, 29, 52, 88–89։*

[17] *Նույն տեղում, էջ 88։ Այս գաղափարները գրեթե նույնությամբ կրկնում է նաեւ Փավստոս Բուզանդը (տե՛ս Բուզանդարան Պատմութիւնք, Մատենագիրք Հայոց, Ե. դար, հտ. Ա., Անթիլիաս–Լիբանան, 2003 (այսուհետեւ՝ Բուզանդարան), էջ 298, 313, 319, 320, 322)։*

եւ առանձին Աստծու, Սբ. Սահակն ու Սբ. Մեսրոպը Մելիտինեի Ակակիոս եպիսկոպոսին եւ Կոնստանդնոպոլսի Պրոկղ պատրիարքին ուղղված իրենց գրություններում նշում են, որ Քրիստոսում երկու որդի կամ երկու տեր ընդունելը սխալ եւ խավարահեղց մոտեցում է, քանի որ մեղքերից ապականված եւ հնացած մարդուն ամբողջապես՝ մարմնով, հոգով եւ ոգով նորոգելու համար Աստված ինքը պետք է ճշմարիտ մարդ դառնար, իրենով մաքրելով մարդկային բնությունը, որը եւ իր մարդեղացման ողջ նպատակն էր[18]։ Մինչդեռ, Քրիստոսում երկուսին ճանաչել՝ կնշանակեր մերժել Աստծու եւ մարդու կատարյալ միությունը։ Քրիստոսում չկան երկու տերեր կամ երկու որդիներ՝ մեկն Աստծու, մյուսը՝ մարդու, այլ նա ինքն Աստծու եւ մարդու Որդին է։ Աստծու Խոսքն ինքը մարմին վերցնելով դառնում է իրական մարդ՝ մարմնով, հոգով եւ ոգով, ինչպես բոլոր մարդիկ են, միեւնույն ժամանակ, մնալով նույն Աստվածը, որ էր, քանզի երբ ինքն իրեն իբրեւ մարդ զոհաբերում է խաչի մահվամբ՝ ինքն էլ իրեն իբրեւ Աստված ընդունում է, ինչը տեղի է ունենում առանց ժամանակային կամ տարածական կամ որեւէ այլ տեսակի տրոհման եւ երկվության, քանի որ գործող անձը մեկն է՝ նույն ինքն Աստծու Որդին[19]։

Բնական է, որ ներստորականները, ինչպես նաեւ նրանց նախորդող շատ ուրիշներ, չէին կարողանում ընկալել, թե ինչպես Քրիստոս կարող է լինել «մի», կատարելապես լինելով Աստված եւ մարդ, երբ Աստված անշարշարելի է, իսկ Քրիստոս խաչվել է, շարշարվել ու մահացել։ Այս հարցին կարծես ի պատասխան, Սբ. Սահակն ու Սբ. Մեսրոպը հստակեցնում են, որ «աստվածությունը չի շարշարվում մարմնում», բայց Որդին կամավորաբար, առանց որեւէ պարտավորվածության, ստանձնում է այդ շարշարանքը եւ մնացյալ կրքերը՝ մարդ դառնալով.

«Եւ վասն մարմնազգեցութեան Որդոյ այսպէս հաւատամք. զի առ յանձն լինել մարդ կատարեալ յաստուածածին Մարիամայ Սրբով Հոգւով, առեալ շունչ եւ մարմին ճշմարտիւ եւ ոչ կեղծեաւք, այսպէս եւ կատարեաց փրկել

---

[18] *Տե՛ս Պատասխանի Տեառն Սահակայ, Թղթոյն Ակակայ, Մատենագիրք Հայոց, Ե. դար, հտ. Ա., Անթիլիաս–Լիբանան, 2003 (այսուհետեւ՝ Պատասխանի թղթոյն Ակակայ), էջ 223–224, հմմտ. Պատասխանի թղթոյն Պրոկղի Երանելոյ, ի Սահակայ եւ ի Մաշդոցէ, Սուրբ Վարդապետացն Հայոց, Մատենագիրք Հայոց, Ե. դար, հտ. Ա., Անթիլիաս–Լիբանան, 2003 (այսուհետեւ՝ Պատասխանի թղթոյն Պրոկղի), էջ 221։*

[19] *Տե՛ս նույն տեղում, էջ 219, 220, հմմտ. Պատասխանի թղթոյն Ակակայ, էջ 223։*

զմեր մարդկութիւնս, եւ ճշմարտիւ շարշարեցաւ: Ոչ եթէ ինքն պարտէր շարշարանաց, զի ազատ է աստուածութիւնն ի շարշարանաց, այլ վասն մեր էառ յանձն զշարշարանս, խաչեցաւ եւ թաղեցաւ եւ յերիր աւուր յարեաւ, եւ յերկինս համբարձաւ, եւ ընդ աջմէ Հաւր նստաւ…

Ինքն յանձն էառ քաղց եւ ծարաւ, աշխատութիւն եւ քուն, իբր ոչ եթէ Աստուածութիւնն ի մարմնոյն շարշարանաց ի պարտութիւն մատնեալ էր, այլ զի խցցէ զանամաւթ բերանս եւ անաւէնութեամբ սրեալ զլեզուս, որ արդէն իսկ յաւժարեալ են հայհոյութիւնս խաւսել. որք ասենն՝ ոչ ճշմարտութեամբ այլ կեղծեաւք ի ցնորս առ աչաւք երեւելով գալուստն եղեւ, համբեր յանձն առեալ ապտակս եւ անարգանս, խաչ եւ մահ, իբրեւ ոչ եթէ ինքն պարտական եւ արժանի էր այսմ. եւ ոչ մահուն արժանի էր զոր մեռաւ, զի անմահ է Աստուածութիւնն, այլ զի զմեր անարգանս որ ի մեղաց մերոց եղեւ, սրբով Աւետարանաւ եւ պատուական արեամբն ջնջել ի մէնջ եւ լուանալ արժանի արասցէ»[20]:

Այստեղ տեսնում ենք, որ Սբ. Սահակն ու Սբ. Մեսրոպը անդրադարձ են կատարում ոչ միայն նեստորականներին, այլ նաեւ երեւութականներին (ի ցնորս առ աչաւք երեւելով գալուստն եղեւ), հստակեցնելով, որ թեեւ աստվածությունն ազատ է չարչարանքներից, մարդացած Աստված ճշմարտապես է չարչարվել, եւ «ոչ կարծյոք»։ Քրիստոս Աստծու Միածին Որդին է, որ մարդկանց փրկության համար մարմին հագնելով, մարմնանալով՝ կատարյալ մարդ է դարձել, կամավորաբար ստանձնելով մարդկային կրքերը։

Ուշագրավ է, որ հեղինակներն Աստծու Որդու մարդեղացումը բնութագրում են ոչ միայն իբրեւ «մարմնացում», այլ նաեւ «մարմնազգեցություն» (մարմին հագնել)։

«Մարմնացման» պարագային շատ հստակ է, որ «մարմին» ասելով հեղինակն ընկալում է ոչ թե անշունչ մարմինը իբրեւ լոկ նյութական գոյություն, այլ՝ շնչով եւ հոգով հանդերձ, ինչը խորհրդանշում է այն, որ մարմնացմամբ Աստծու Որդին դառնում է կատարյալ մարդ։ «Մարմնազգեցության» պարագային հեղինակը ցույց է տալիս, որ «մարմին հագնելու» գաղափարը հավասարազոր է «մարմին դառնալուն», քանի որ հավասարապես բնութագրվում է այն, որ Աստծու Որդին հանձն է առնում լինել «կատարյալ մարդ», ինչպես արդեն իսկ վկայվել է. «Եւ վասն մարմնազգե-

---

[20] *Պատասխանի թղթոյն Պրոկղի, էջ 220–221։*

ցութեան Որդոյ այսպէս հաւատամք. զի առ յանձն լինել մարդ կատարեալ... առեալ շունչ եւ մարմին ճշմարտիւ եւ ոչ կեղծեաւք»[21]։

Կոստանդնուպոլսոյ պատրիարք Նեստորին ու նրա ուսմունքը դատապարտել են Ընդհանրական Եկեղեցու 431 թ.՝ Եփեսոսի տիեզերաժողովի ժամանակ։ Այս մասին գրավոր կերպով Սբ. Մեսրոպ Մաշտոցին տեղեկություններ է հաղորդել դիտարվող շրջափուլի ընթացքին դրսում գտնվող նրա աշակերտներից Սբ. Եզնիկ Կողբացին։ Վերջինիս անվամբ հայտնի նամակի պահպանված պատառիկում ընթերցում ենք.

«... խոստովանել զՔրիստոս՝ Աստուած ճշմարիտ եւ Որդի Աստուծոյ եւ Միածին, ծնեալ ի Հաւրէ յառաջ քան զյաւիտեանս, եւ Տէր արարիչ ամենայն արարածոց, եւ զնոյն Բանն Աստուած ի վախճան ժամանակաց զգեցեալ մարմին եւ եղեալ վասն մեր մարդ, առանց շրջելոյ եւ անկանելոյ յիւր աստուածական բնութենէն, եւ ծնեալ ի սուրբ Կուսէն, Աստուած՝ ըստ մարմնաւոր ծննդեան մարդ կատարեալ. եւ կոչի եւ է Կոյսն Տիրածին եւ Աստուածածին, եւ ծնեալն Աստուած եւ մարդ կատարեալ»[22]։

Հավատքի այս դավանության դրույթներից քրիստոսաբանական առումով առանձնակի կարեւորություն ունեն հետեւյալները.

ա. Հայր Աստծու Միածին Որդին՝ Խոսք Աստվածը մարմին վերցրեց (հագավ) եւ մարդ դարձավ առանց իր աստվածային բնությունից զրկվելու (նվազելու) եւ այլափոխվելու (փոխարկվելու)։

բ. Աստված, որ ծնվեց Սբ. Կույսից՝ կատարյալ մարդ է իր «մարմնավոր՝ մարդկային ծննդյամբ»։

գ. Քանի որ Սբ. Կույսից ծնվածը Աստված է եւ կատարյալ մարդ, Սբ. Կույսը ոչ միայն Աստվածածին է, այլեւ՝ Տիրածին։

Այստեղ հատուկ ուշադրության է արժանի «Տիրածին» բնութագրումը, որը ոչ թե հակադրության մեջ է դրվում «Աստվածածին» լինելու հետ (ինչպես Նեստորի «Քրիստոսածին» եզրույթի կիրառման պարագա-

---

[21] Նույն տեղում, էջ 220, հմմտ. նույն տեղում, էջ 219, Կանոնք Սրբոյն Սահակայ Հայոց Հայրապետի Գլուխք ԾԵ., Մատենագիրք Հայոց, Ե. դար, հտ. Ա., Անթիլիաս–Լիբանան, 2003, էջ 183, Պատասխանի թղթոյն Ակակայ, էջ 223։

[22] Ի թղթոյն Եզնկայ Կողբացւոյ թարգմանչի, զոր գրեաց ի Կոստանդնուպոլիս առ Երանելին Մաշտոց վարդապետ, յետ առաջնոյ ժողովոյն Եփեսոսի յորում լուծին ի պատուոյ զՆեստոր Կոստանդնուպոլսի եպիսկոպոս, Մատենագիրք Հայոց, Ե. դար, հտ. Ա., Անթիլիաս–Լիբանան, 2003, էջ 513։

յին էր), այլ՝ համալրում վերջինիս։ Մարիամը եւ Աստվածածին է եւ Տիրածին, քանի որ նրանից ծնվածը կատարյալ Աստված է, որ մարդկային իր ծննդյամբ դարձել է նաեւ կատարյալ մարդ՝ ճանաչվելով իբրեւ Տեր։

Այս նույն մոտեցումը տեսանելի է նաեւ Կողբացու «Եղծ աղանդոց» երկում, որտեղ հեղինակը շատ հստակ շեշտում է Քրիստոսի Աստված լինելը, անսերմ հղությունը եւ մարդեղությունը, որը բնութագրում է «զգենուլ» եզրույթով[23]։ Նա ընդգծում է, որ մարդեղացումը ոչ թե «նմանություն» է, այլ «ճշմարտություն», հակառակ պարագային փրկագործությունը եւս անիրական կլիներ. եւ ինչն է առավել հետաքրքիր, որ նրա համար ասել, թե՝ Քրիստոս մարմին չի «հագել», կնշանակի, ասել, թե՝ Քրիստոս ճշմարիտ մարդ չի դարձել, որով եւ մարդու փրկագործությունն անկատար է մնացել.

«Եւ եթե նմանութեամբ միայն եղեւ մարդ, եւ կերպարանաւ եւեթ էր խաչն, եւ՝ շարչարանք, եւ՝ մահն, ապա եւ փրկութիւն ինչ ոչ գործեցաւ։ ... Բայց զայն եւս հարցցուք. մարմնաւո՞ր ոք էր Յեսուն, եթե՝ անմարմին։ Եթե ասիցեն, թե անմարմին էր, լուիցեն, զի եթե անմարմինն եկն եւ աստ մարմին, որպէս ասենն, ոչ զգեցաւ, յայտ է, եթե ոչ ետ ինչ եւ ոչ առ, ոչ մեռաւ, եւ ոչ փրկեաց»[24]։

Ե. դարի հաջորդ երկը, որ մեզ քրիստոսաբանական հետաքրքիր երանգներ է ներկայացնում՝ «Բուզանդարան պատմություններն» են, որտեղ յուրահատուկ կերպով մատնանշվում է Քրիստոս նախագոյության հանգամանքը։ Ըստ այսմ՝ Հիսուս Քրիստոս Աստծու Որդին ու ծնունդն է, արարչակիցը իր Հոր, որ ի սկզբանե Հոր հետ լինելով՝ իր խոսքի զորությամբ արարում է աշխարհը, կազմավորում է մարդուն եւ առաջնորդում նրան ողջ Հին Կտակարանում՝ ուղղորդում է Աբրահամին Իսահակի զոհաբերության դրվագում, խոսում է Մովսեսի հետ այրվող մորենու միջից, եւ ինքն էլ կերակրում ու հագեցնում է հրեաներին անապատում, որից հետո տեսնելով մարդկանց շարունակական անարգանքը Հոր հանդեպ՝ ինքը մարդ է դառնում՝ ուսուցանելու նրանց ճշմարտությունը եւ հաշտեցնելու նրանց Աստծու հետ.

«Իսկ Տէր եկն յայց ելեալ կոստականին, ծնաւ ի Կուսէն ի մարդկան կերպարանս, զի արասցէ խաղաղութիւն յերկինս եւ յերկրի, եւ ածցէ զիւր Հայրն

---

[23] *Տե՛ս Եղծ Աղանդոց [Եղնիկ Կողբացի], Մատենագիրք Հայոց, Ե. դար, հտ. Ա., Անթիլիաս–Լիբանան, 2003, էջ 445, 452, 454, 459, 464։*

[24] *Տե՛ս նույն տեղում, էջ 502–503։*

ծնաւղ ի հաշտութիւն ընդ արարածս իւր՝ մարդակերպ պատկերաւն, զի յանդիման լիցին ամենայն մերժեալ արարածքն աներեւոյթն Աստուծոյ»[25]։

Ուշագրաւ է, որ երկի հեղինակը, իր պատմության մեջ շարադրելով քրիստոսաբանական ընկալումները՝ անդրադառնում է նաեւ արիոսականներին եւ նրանց դեմ արտահայտվելով նշում, որ Հիսուս Քրիստոսը ծնունդ եւ որդի է Հոր բնությունից[26]։ Նրա համար հստակ է, որ մարդ ծնվողն Աստված է եւ Աստծու Որդի, որի մարդանալը բնութագրում է իբրեւ «ծառայի կերպարանք» առնել եւ «մարդակերպ պատկեր» ունենալ[27]։

«Կորպարանք» եզրույթի կիրառումը եւս կարեւոր է։ Հեղինակը «ծառայի կերպարանք» առնելուն զուգահեռ բազմիցս մատնանշում է նաեւ Քրիստոսի՝ իբրեւ ծառայի կերպարանք «ծնվել»-ու եւ «լինել»-ու («եղեւ») հանգամանքները, որով ընգծվում է «կերպարանքի» իրականությունը՝ Քրիստոս մարդկային կերպարանք է առնում, քանի որ ճշմարտապես ներկայանում է մարդկանց իբրեւ մարդ[28], որով «կերպարանքը»՝ ներկայացնում է ճշմարիտ մարդկային ամբողջականությունը։ Ընդորում՝ ծառայի կերպարանք առնելով Քրիստոս ազատում է մարդուն ծառայությունից՝ քանզի նորոգում է մեղքով հնացած մարդուն՝ նոր մարդ դարձնելով, ինչը հնարավոր էր միայն այն պարագային, եթե Քրիստոս իրական եւ կատարյալ մարդ դառնար. «Ապա յիրաւի ուրեմն ի նորոգման արարածոց, զամենայն վերստին նորոգէ. զի եթէ իցէ ոք ի Քրիստոս՝ նոր արարած։ Զի այն որ հինն էր՝ էանց, արդ աւասիկ եղեւ նոր ամենայն. զի եկն էառ զմարդկան կերպարանս, եւ ինքեամբ դարձեալ զամենայն նորոգեալ հաստատեաց»[29]։

Հայոց Եկեղեցում Ե. դարի քրիստոսաբանության համար շրջադարձային կերպար է Սբ. Եղիշե վարդապետը, որ հայտնի է իր «Պատմությամբ», «Արարածոց մեկնությամբ» եւ «Խրատներով»։

Վարդանանց պատերազմին նվիրված իր պատմության մեջ, որը պատմագրկան երկ լինելով հանդերձ, միեւնույն ժամանակ խորին աստվածաբանական ընկալումներ է պարունակում, հեղինակը բացատրում է, որ Աստված ինքը աշխարհ գալով մարդ է դառնում՝ մարդկային կերպարանք առնելով, Սուրբ Կույսից վերցնում եւ «հագնում է մարդկային

---

[25] *Բուզանդարան, էջ 320, հմմտ. նույն տեղում, էջ 319, 326։*
[26] *Տես նույն տեղում, էջ 330։*
[27] *Տես նույն տեղում, էջ 319, 320, 322, 327, 397։*
[28] *Տես նույն տեղում, էջ 320, 322, 397։*
[29] *Նույն տեղում, էջ 320։*

բնությունն ամփոփող չարչարելի մարմին» եւ այն անբաժանելի կերպով միավորում է իր աստվածությանը, իր մարմնով ընդունում է մարդկանց մեղքերի պատճառով հասանելի չարչարանքները, ապա՝ խաչվում այդ նույն մարմնով, հարություն առնում եւ համբարձվում երկինք[30]*։ Ճշմարիտ Աստված էր եւ դառնում է ճշմարիտ մարդ։ Մարդ դառնալով չի կորցնում իր աստվածությունը, ոչ իսկ Աստված մնալով՝ աղավաղում իր մարդկությունը, այլ նույնն է եւ մի, որ միավորվում է մարդկության հետ, որպեսզի եւ մարդուկությունը միավորվի իր աստվածությանը.*

«Եկն եմուտ ընդ մեռով մարդկութեամբս, զի եւ մեք մտցուք ընդ նորա աստուածութեամբն։ ...միանգամայն զբոլոր բնութիւնն մարմնով, շնչով եւ հոգւով զգեցաւ, եւ միաբանեաց ընդ աստուածութեանն. միութիւն, եւ ոչ երկուութիւն. եւ այսուհետեւ մի գիտեմք զաստուածութիւնն, որ յառաջ էր բան զաշխարհս, նոյն եւ այսաւր»[31]*։*

Ծննդոց գրքին նվիրված իր մեկնության մեջ անդրադառնալով Քրիստոսի մարդեղացմանը՝ հեղինակը բացատրում է, որ Որդին Հորից իր ծննդյամբ անաճ եւ անհավելված բնություն է, այսինքն՝ անփոփոխ, չի աճում, որեւէ բան իր բնությանը չի ավելացնում եւ չի նվազեցնում այն, սակայն, միեւնույն ժամանակ, անփոփոխելի իր աստվածային բնությամբ հանդերձ Աստծու Որդին դառնում է նաեւ ճշմարիտ մարդ՝ ծնվելով կույսից եւ պահելով մարդկային բնության բոլոր օրենքները. «ոչ սոսկ բան, որպէս եւ էջն, այլ մարդ ճշմարիտ եղեալ, սակայն զիւրն ոչ կորուսեալ, այլ մնացեալ մի որդի եւ մի անձնաւորութիւն եւ բնութիւն, անշփոթ միաւորութեամբ եւ անբաժանելի Աստուածութեամբ»[32]*։*

Աստծու մարդեղացումը, ինչպես նախորդ հեղինակների, այդպես եւ Սբ. Եղիշեի երկերում բնութագրվում է իբրեւ մարդկային բնության՝ մարմնի «զգենումն», որի մասին սուրբը շատ յուրահատուկ մի բացատրություն է տալիս։ Աստծու Որդին «հագնում» է մարդկային բնությունն իբրեւ պատմուճան, ինչը խորհրդանշում է նրա ճշմարիտ եւ կատարյալ

---

[30] *Տե՛ս Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին Դաւթի երիցու Մամիկոնի հայցեալ [Եղիշէի Վարդապետի], Մատենագիրք Հայոց, Ե. դար, հտ. Ա., Անթիլիաս–Լիբանան, 2003 (այսուհետեւ՝ Վասն Վարդանայ), էջ 621, 651, 694–695։*

[31] *Նույն տեղում, էջ 563, հմմտ. նույն տեղում, էջ 563–564։*

[32] *Մեկնութիւն Արարածոց Գրոց Եղիշէի Վարդապետի, Մատենագիրք Հայոց, Ե. դար, հտ. Ա., Անթիլիաս–Լիբանան, 2003 (այսուհետեւ՝ Մեկնութիւն Արարածոց), էջ 900 հմմտ. նույն տեղում, էջ 899, Վասն Վարդանայ, էջ 563։*

մարդեղացումը, իսկ մենք՝ մարդիկ, Քրիստոսի մահն ընդունելով՝ «հագնում ենք» նրան՝ Քրիստոսին, ճշմարտապես միավորվելով նրա հետ.

«Եւ զի հանդերձք կոչիմք նմա, Ասէ Եսայեաւ. «Կենդանի եմ ես, ասէ Տէր, զի զամենեսեան զձեզ իբրեւ զհանդերձ զգեցայց» (Ես. ԽԹ. 18), քանզի որպէս միաւորեալ Աստուածութեամբ մարմին նորա պատմուճան կոչի վայելչական. «Տէր թագաւորեաց, ասէ, զվայելչութիւն զգեցաւ», նոյնպէս եւ «սուրբ եկեղեցի նորա, որ է մարմին ի մարմնոյ նորա եւ ոսկր յոսկերաց նորա» (Եփես. Ե. 30), հանդերձ նորա կոչի որում զգեցոյց զինքն հանդերձ փրկութեան եւ պատմուճան ուրախութեան, զի «որ միանգամ մկրտեցաք ի Քրիստոս Յիսուս զՔրիստոս զգեցեալք եմք» (Գաղ. Գ. 27)»[33]:

Ճշմարիտ մարդ դառնալով Աստծու Որդին չի նվազում իր աստվածային բնությամբ, այլ՝ մնում է կատարյալ Աստված դառնալով նաեւ կատարյալ մարդ եւ գործում է համապատասխանաբար՝ ըստ իր աստվածության կամ՝ ըստ մարդկության, մարդկային բնությամբ.

«Տէրն Դաւթի ըստ Աստուածութեանն եւ Որդին նորա ըստ մարդկութեան զաղամաստեղծ ձեռսն եւ զերկնապարզ բազուկսն տարածեաց ի վերա խաչին... Վասն մեղաց ազգի մարդկան եւ կռապարիշտ մոլորութեան եկն Որդին Աստուծոյ մարդկային բնութեամբս եւ անուամբ առիւծու ցասմամբ զարթուցեալ ի վերայ իշխանին մահու եւ մեղաց մոլորութեան, զգեցուցանելով տկարացեալ բնութիւն մարդոյն զզաւրութիւն առիւծու»[34]:

Ուշագրավ է, թե ինչպես է հեղինակը մարդեղացումը բնորոշում իբրեւ աստվածայինի եւ մարդկայինի միություն, խոսում Քրիստոսի աստվածային եւ մարդկային դրսեւորումների, աստվածությամբ կամ մարդկությամբ երեւալու եւ ըստ այդմ գործելու մասին, անուղղակիորեն ցույց տալով, որ իր մի բնությունը («մի անձնաւորութիւն եւ բնութիւն, անշփոթ միաւորութեամբ եւ անբաժանելի Աստուածութեամբ»[35]) չի ենթադրում երկու բնությունների շփոթ կամ ձուլում եւ ոչ էլ որեւէ տեսակի երկվություն, այլ՝ աստվածայինի եւ մարդկայինի անբաժան միություն[36]:

---

[33] *Մեկնութիւն Արարածոց, էջ 890, հմմտ. նույն տեղում, էջ 842:*

[34] *Նույն տեղում, էջ 883, 884:*

[35] *Նույն տեղում, էջ 900:*

[36] *Տե՛ս Վասն Վարդանայ, էջ 563, Մեկնութիւն Արարածոց, էջ 883–886, 888, 891, 894, 900,901, Խրատք Եղիշէի Վարդապետի, Մատենագիրք Հայոց, Ե. դար, հտ. Ա., Անթիլիաս–Լիբանան, 2003, էջ 972, 973, 960, 964, 965, 968, 973, 974, 988, 1009, 1011–1013, 1018, 1023, 1033:*

Աստվածայինի եւ մարդկայինի միության վերաբերյալ նույն այս պատկերացումները տեսանելի են նաեւ Սբ. Եղիշեի անվամբ հայտի «խրատներում», որոնց մեջ առանձնանում է հատկապես «Յաղաւթսն որ ասէ՝ «Հայր Մեր որ յերկինս» *խրատը, որտեղ հեղինակը խոսում է մարդկանց համար Քրիստոսի մարդկայնորեն «եղբայր» եւ միաժամանակ աստվածությամբ «հայր» լինելու մասին*[37]*։*

Կարեւոր է նշել, որ «Հայր Մեր»-ի մեկնությանը նվիրված այս խրատի վերջում գրված է. «Յաջորդ ճառիդ գտանին յանուն Եղիշէի Վարդապետի. այլ հարազատութեանն եւ իմաստիցն չիք երաշխաւորել»[38]*։*

Հաջորդող խրատների, որոնք են՝ «Ի Մկրտութիւնն Քրիստոսի», «Ի Թաբոր լերին յայտնութիւն Տեառն առ Պետրոսեանց», «Վարդապետութիւն ըստ Յովհաննու Սիրելւոյ ի շարշարանս Տեառն» *հեղինակ(ներ)ի անորոշության խնդիրը կասկածի տակ կարող էր դնել նաեւ դրանցում առկա աստվածաբանության Ե. դարով թվագրումը։ Սակայն, վերջիններիս քննությունը ցույց է տալիս, որ դրանցում առկա քրիստոսաբանական տեղիներում միակ հանգամանքը, որ տարբերվում է Եղիշեի «Պատմության» կամ «Արարածոց» մեկնության հետ համեմատելիս՝ «աստվածացում» եզրույթի կիրառումն է իբրեւ մարդկանց փրկագործություն*[39]*, թեեւ աստվածացման՝ Աստծու հետ միավորմամբ մարդու փրկության գաղափարն առկա է Սբ. Եղիշեի բոլոր երկերում։ Քրիստոսաբանական մնացյալ բոլոր տեղիները համահունչ են Սբ. Եղիշի քրիստոսաբանական պատկերացումներին։*

Այսպես, օրինակ Քրիստոսում աստվածայինի եւ մարդկայինի անշփոթ միության մասին վերոհիշյալ խրատներն ասում են նույնը, ինչ ասվում է «Արարածոց մեկնության» մեջ, այն է՝ Քրիստոսի գործերում տեսանելի է թե՛ նրա աստվածությունը եւ թե՛ մարդկությունը, բայց նա մեկն է՝ մի եւ նույն Աստծու եւ մարդու Որդին. «Կատարեալ յամենայնի ըստ աստուածութեանն, կատարեալ եւ ի հասակի մարդկութեանս»[40], «Հայր յայտնեաց նմա զբոլոր աստուածութիւնն Որդւոյ, զի աստուածութեամբ եւ մարդկութեամբ զշարշարանսն ընդունիցի, եւ որ շարշարիցի՝ նոյն եւ յառնիցէ»[41], «Տեսանել զորդին մարդոյ ի վերայ խաչին, որ ընկալաւ շարշարանս յիւր մար-

---

[37] *Տե՛ս նույն տեղում, էջ 955–958։*
[38] *Տե՛ս նույն տեղում, էջ 959։*
[39] *Տե՛ս նույն տեղում, էջ 962, 1014։*
[40] *Նույն տեղում, էջ 960։*
[41] *Նույն տեղում, էջ 964։*

մինն. եւ զնոյն իմանայցեն որդի Աստուծոյ, արարիչ երեւելեաց եւ անտեսանելեաց ... Տէրն՝ որ Աստուածն էր բնութեամբ եւ մարդ ճշմարիտ. արարիչ ըստ աստուածութեանն եւ արդար ըստ մարդկութեանն»[42]։

Անգամ «Տիրոջ չարպարանքների մասին» խրատում հստակ տեսանելի են նմանությունները «Հայր մեր»-ին նվիրված խրատի հետ, քանի որ երկուսն էլ Քրիստոսին ներկայացնում են իբրեւ «հայր» եւ «եղբայր» մարդկության համար[43]։

Միեւնույն ժամանակ, Սուրբգրային պատկերացումների համեմատությունն ու աստվածաբանության ընդհանուր քննությունը, ինչպես օրինակ նույն «չարչարանքների մասին» խրատում առկա վախճանաբանական պատկերացումների ուսումնասիրությունը, հուշում են, որ «խրատները» ամբողջությամբ Սբ. Եղիշեին վերագրելը սխալ պիտի լինի։

Այսուհանդերձ, ամփոփելով վերոգրյալը, հարկ է նշել, որ մինչ այս բոլոր հեղինակները խոսում էին Քրիստոսի աստվածային բնության եւ իրական մարդեղացման՝ մարդկային բնություն վերցնելու մասին, սակայն Սբ. Եղիշեն իր քրիստոսաբանական պատկերացումներով ավելի է առաջանում, խոսելով՝ աստվածային եւ մարդկային բնությունների անշփոթ միության, մի անձ եւ մի բնություն ունենալու, ինչպես նաեւ՝ ըստ աստվածության եւ ըստ մարդկության գործելու եւ ըստ այդմ՝ իբրեւ մարդացած Աստված իր ճշմարիտ աստվածությամբ եւ ճշմարիտ մարդկությամբ ներկայանալու մասին։

Շարունակությունը՝ հաջորդիվ

---

[42] *Նույն տեղում, էջ 1007–1008։*

[43] *Տե՛ս նույն տեղում, էջ 1021–2022, հմմտ. նույն տեղում, էջ 955–958։*